ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

ԳՄԳՀ-ԳՀԽԾՁԲ-23/1 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ՁԵՎՈՎ ԳՆՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՀԱՅՏԵՐԻ ԲԱՑՄԱՆ ՆԻՍՏԻ

ք.Գավառ «16» փետրվարի 2023թ.

ժամը 11:00

Մասնակցում էին

Հանձնաժողովի գնահատող անդամներ՝ Գ.Բոշյան /նախագահ/,
Ա.Ղուրշուդյան, Ն.Մուխսյան,

Բացող անդամներ՝ Ա. Կատվալյան, Գ.Աղլամազյան,

Քարտուղար՝ Ս.Թամամավեյան,

<u>ԳՄԳՀ-ԳՀԽԾՁԲ-23/1 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի բացման նիստի մասին</u>

Գ.Բոշյան

1) Գնումների համակարգող /քարտուղար/ Սեդա Թամամավեյանը հայտարարեց, որ Armeps էլեկտրոնային համակարգով հայտ է ներկայացրել 6 /վեց/ մասնակից՝

N	Մասնակցի անվանումը	Մասնակցի հասցեն, էլ.հասցե
1	«ՌԱՖ-ԱՎՈ» ՍՊԸ	ք.Գավառ, Արծրունի եղբ. 85 hergnyan.raf@mail.ru
2	«ԱՖԻՆԱ ՊՐՈՋԵՔԹՍ» ՍՊԸ	ք. Հրազդան, Վանատուր թաղամաս 571 nareksafaryan95@gmail.com
3	«ԳԼՈԲԱԼ ԻՆԺԵՆԵՐ» ՍՊԸ	ՀՀ Գեղարքունիքի մարզ, ք.Գավառ, Բոշնաղյան փող., 1 նրբ., տուն 8 globalengineerllc@gmail.com
4	«Ս-ՓՐՈՋԵՔԹ» ՍՊԸ	ՀՀ Գեղարքունիքի մարզ, գ.Կարմիրգյուղ, Ս.Ավետիսյան 47 s-project19@yandex.ru
5	«ՌԵԳՈՒԼ» ՍՊԸ	Գեղարքունիքի մարզ, գ. Կարմիրգյուղ haferdgas@mail.ru
6	«ԻՆՖՐԱ ԴԻԶԱՅՆ» ՍՊԸ	ք. Երևան, Օստրովսկու փ. 14Ա տուն infradesign@mail.ru

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ 0:

2) «ՌԱՖ-ԱՎՈ» ՍՊԸ-ն հայտ է ներկայացրել 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ չափաբաժինների մասով,
«ԱՖԻՆԱ ՊՐՈՋԵՔԹՍ» ՍՊԸ-ն հայտ է ներկայացրել 7-րդ չափաբաժնի մասով,
«ԳԼՈԲԱԼ ԻՆԺԵՆԵՐ» ՍՊԸ-ն հայտ է ներկայացրել 3-րդ, 7-րդ չափաբաժինների մասով,
«Ս-ՓՐՈՋԵՔԹ» ՍՊԸ-ն հայտ է ներկայացրել 1-ին, 2-րդ, 7-րդ չափաբաժինների մասով,
«ՌԵԳՈՒԼ» ՍՊԸ-ն հայտ է ներկայացրել 1-ին, 3-րդ, 4-րդ չափաբաժինների մասով,
«ԻՆՖՐԱ ԴԻԶԱՅՆ» ՍՊԸ-ն հայտ է ներկայացրել 1-ին, 2-րդ չափաբաժինների մասով:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ 0:

3) Ուսումնասիրելով ԳՄԳՀ-ԳՀԽԾՁԲ-23/1 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի մասնակիցների կողմից ներկայացրած հայտերը պարզվեց.

3.1) «ՌԱՖ-ԱՎՈ» ՍՊԸ-ի ներկայացրած հայտը չի համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին՝

- հրավերում առկա փաստաթղթերը ստորագրվել են մի անձի կողմից, որը չունի նման լիազորություն՝ չի պահպանվել հրավերի փաթեթի 2.6 կետի պահանջները,

- հավելված 1.2-ում /իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրի 1.3.3 կետում/ բացակայում է «հայտարարագիրը ներկայացնող անձի ստորագրությունը»,
- հավելված 3-ում /մասնակցի կողմից առաջարկվող հիմնական աշխատակազմի մասին տեղեկանք/ բացակայում են մասնագետների փաստաթղթերը (անձը հաստատող փաստաթուղթ, դիպլոմներ, համաձայնագրեր)՝ չի պահպանվել հրավերի փաթեթի 2.5.2 կետի պահանջները,
- հայտում բացակայում են նախկինում կատարված նմանատիպ պայմանագրերը՝ չի պահպանվել հրավերի փաթեթի 2.5.1 կետի պահանջները:

3.2) «ԱՖԻՆԱ ՊՐՈՋԵՔԹՍ» ՍՊԸ-ի ներկայացրած հայտը չի համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին՝

- հրավերում առկա փաստաթղթերը ստորագրվել են մի անձի կողմից, որը նման լիազորություն չունի՝ չի պահպանվել հրավերի փաթեթի 2.6 կետի պահանջները,
- հայտում բացակայում է մասնակցի լիցենզիան (ներկայացված ներդիրում նշված է, որ «ներդիրը վավերական է լիցենզիայի առկայության դեպքում»)՝ չի պահպանվել հրավերի փաթեթի 1.1 կետի պահանջները,
- ներկայացված հայտում բացակայում է հավելված 3-ը /մասնակցի կողմից առաջարկվող հիմնական աշխատակազմի մասին տեղեկանք/ և անհրաժեշտ փաստաթղթերը՝ չի պահպանվել հրավերի փաթեթի 2.5.2 կետի պահանջները,
- մասնակցի կողմից նախկինում կատարված պայմանագիրը ներկայացված է ջրամատակարարման (հիդրոտեխնիկական ոլորտի) ոլորտի ներդիրի շրջանակներում, այնինչ հրավերով նմանատիպ են համարվում համապատասխան ոլորտի ներդիրների (էներգետիկայի օբյեկտների նախագծային փաստաթղթերի՝ ջերմամատակարարման և գազամատակարարման համակարգեր) շրջանակներում կատարված նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքների նախկինում կատարված պայմանագրերը:

3.3) «ԳԼՈԲԱԼ ԻՆԺԵՆԵՐ» ՍՊԸ-ի ներկայացրած հայտը չի համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին՝

- հավելված 3-ում /մասնակցի կողմից առաջարկվող հիմնական աշխատակազմի մասին տեղեկանք/ բացակայում են մասնագետների փաստաթղթերը (անձը հաստատող փաստաթուղթ, դիպլոմներ, համաձայնագրեր)՝ չի պահպանվել հրավերի փաթեթի 2.5.2 կետի պահանջները,

3.4) «Ս-ՓՐՈՋԵՔԹ» ՍՊԸ-ի ներկայացրած հայտը չի համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին՝

- ներկայացված համաձայնագրերը լրացված են ոչ պատշաճ (համաձայնագրերում նշված չեն համաձայնագրի կնքման օրը, ամիսը, տարին):

3.5) «ՌԵԳՈՒԼ» ՍՊԸ-ի ներկայացրած հայտը չի համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին՝

- ներկայացրած հայտի հավելված 3-ում բացակայում է ճարտարապետ Սուրեն Կարապետյանի անձը հաստատող փաստաթուղթը:

3.6) «ԻՆՖՐԱ ԴԻԶԱՅՆ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը համապատասխանում է հրավերով սահմանված պահանջներին:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ 0:

4) Հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի 526-Ն որոշման 41-րդ կետը և 2023 թվականի փետրվարի 9-ին ԳՄԳՀ-ԳՀԽԾՁԲ-23/1 ծածկագրով հայտարարված գնանշման հարցման հրավերի փաթեթի Ի-ին մասի 8.9 կետի պահանջները, **գնահատող հանձնաժողովը որոշեց՝** կասեցնել նիստը 1 (մեկ) աշխատանքային օրով և «ՌԱՖ-ԱՎՈ» ՍՊԸ-ին, «ԱՖԻՆԱ ՊՐՈՋԵՔԹՍ» ՍՊԸ-ին, «ՌԵԳՈՒԼ» ՍՊԸ-ին, «ԳԼՈԲԱԼ ԻՆԺԵՆԵՐ» ՍՊԸ և «Ս-ՓՐՈՋԵՔԹ» ՍՊԸ-ին առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը՝ 20/02/2023թ.-ը ժամը 18:00-ն, շտկել վերը նշված բոլոր անհամապատասխանությունները և էլեկտրոնային եղանակով Գավառի համայնքապետարանի

էլեկտրոնային փոստի միջոցով գնահատող հանձնաժողովին ներկայացնել համապատասխան փաստաթղթերը:

Վերը նշված անհամապատասխանությունները չշտկելու դեպքում մասնակիցների հայտերը կգնահատվեն հրավերի պահանջներին չհամապատասխանող (անբավարար) և կմերժվեն, իսկ շտկելու դեպքում ոչ գնային պայմանները կգնահատվեն հրավերով սահմանված կարգով:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ 0:

5) Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել սույն թվականի փետրվարի 21-ին ժամը 12:00-ին՝ ք.Գավառ, Գր.Լուսավորչի 12 երկրորդ հարկ, 8-րդ աշխատասենյակ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ 0:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ		
ՆԱԽԱԳԱՀ՝		Գ.ԲՈՇՅԱՆ
ԱՆԴԱՄՆԵՐ՝		Ն.ՄՈՒԽՍՅԱՆ
		Ա.ՂՈՒՐՇՈՒԴՅԱՆ
ԲԱՑՈՂ ԱՆԴԱՄՆԵՐ՝		Ա. ԿԱՏՎԱԿՅԱՆ
		Գ.ԱՂԼԱՄԱՋՅԱՆ
ՔԱՐՏՈՒՂԱՐ՝		Ս.ԹԱՄԱՄԱՎԵՅԱՆ